



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 մարտի 2011 թվականի N 112-Ա

ք. Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով, համաձայն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլանի»>>, 2011 թվականի մայիսի 25-26-ը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Սևաբերդի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը»>> թեմայով կազմակերպելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ՝ փրկարարական ծառայության մայոր Գ. Գրիգորյանին:
2. Հանձնարարել Գ. Գրիգորյանին.
 - 1) Շտաբը կազմավորել մարզային փրկարարական վարչության բազայի վրա, անհրաժեշտության դեպքում միջնորդել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին մարզպետարանի աշխատակազմի համապատասխան վարչությունների և բաժինների մասնագետներով համալրելու համար:
 - 2) Մշակել և մինչև 2011 թվականի ապրիլի 20-ը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հաստատմանը ներկայացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:
3. Հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը ընդգրկել.
 - 1) Կոտայքի մարզային փրկարարական վարչությանը,
 - 2) Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայություններին,
 - 3) Մարզային տարահանման հանձնաժողովին,
 - 4) Զառ, Կամարիս, Գեղաշեն, Զովք համայնքներին:
4. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի նստավայրից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՀԱԿԱԼԴՅԱՆ